



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

№ 69/164-ձ «12» 04 2023թ.

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ԴԻՄԱՑ ԴԱՍԱՎԱՆԴՈՂ ԴԱՍԱԽՈՍԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) կանոնադրության 18-րդ կետի 17-րդ, 57-րդ կետի 10-րդ ենթակետերով և ԵՊՀ ռեկտորի 17.01.2023 թ. թիվ 9/55-Լ հրամանով.

հ Ր Ա Մ Ա Ն Ո Ւ Մ Ե Մ

1. 2022/23 ուստարում և դրանից հետո ԵՊՀ ընդունված (տեղափոխված, ուսանողական իրավունքները վերականգնած և այլն) ուսանողի կողմից որևէ դասընթացի կրկնության դիմաց դասավանդող դասախոսին վարձատրել ժամավճարային հիմունքով և սահմանել ժամավճարի հետևյալ չափերը.

Դասավանդողի աստիճանը/կոչումը	1 ժամի արժեքը (ՀՀ դրամ)
Գիտության դոկտոր/պրոֆեսոր	6000
Գիտության թեկնածու/դոցենտ	5000
Առանց գիտական աստիճանի/կոչման	4000

Դասընթացի կրկնությունն օտար լեզվով կազմակերպելու դեպքում 1 ժամի համար սույն կետով սահմանված վարձատրության չափերը բազմապատկվում են 1,5 գործակցով:

2. Սահմանել, որ.


1) մինչև 6 ուսանողի համար դասընթացի կրկնությունը կազմակերպելու դեպքում 1 ժամի համար սույն հրամանի 1-ին կետով սահմանված վարձատրության չափը բազմապատկվում է 0,5 գործակցով,

2) նույն կամ այլ խմբի (եթե դասընթացը նախատեսված է տվյալ ՄԿԾ ուսումնական պլանով) մասնագիտական կրթական ծրագրի (ՄԿԾ) հետ միաժամանակ դասընթացի կրկնությունը կազմակերպելու դեպքում կրկնող ուսանողների համար դասավանդող դասախոսը հավելյալ չի վարձատրվում:

3. Սույն հրամանի կատարումն ապահովելու նպատակով ԵՊՀ հաշվապահական հաշվառման վարչությանը և անձնակազմի կառավարման բաժնին հանձնարարել կատարելու համապատասխան հաշվարկներ և ձևակերպումներ:

4. Սույն հրամանի մասին իրազեկել ԵՊՀ հաշվապահական հաշվառման վարչությանը, ֆինանսական վերլուծությունների վարչությանը, ուսումնամեթոդական վարչությանը, անձնակազմի կառավարման բաժնին և աշխատողներին:

ԵՊՀ ՌԵԿՏՈՐ

 Հ. Կ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

